

նօրէից ուրկանոցի վանքը պարսկական կամ արաբական յարձակմանց օրերուն քանդուած ու տակաւին չէր վերաշինուած այն թուականին, բայց ուրկանոցի սենեակները գոյութիւն ունէին և կամ նորոգուած էին ստիպողաբար, ուստի պաշտօնեան վանք ու վանական հօն չգտնելով՝ նշանակած է միայն բորոտներուն թիւը և միացուցած մերձակայ Ս. Ստեփանոսի վանքին քահանայից թուոյն: Յետնագոյն դարու ուղեգիր ուխտաւորի մը գրածէն կը հասկցուի թէ յիշատակեալ վանքը Դաւթի դրան մօտ էր և վերանորոգուած, ու դարձեալ հօն կը մնային ուրուկները: Տեղագրական պարագաներէ դատելով՝ կը նկատուի որ ուրուկներու ապաստանարանը ու վանքը շրջապատուած էր մօտակայ քանի մը վանքերէ. իր դիմացն էր Ս. Հրէշսկսկսեքը, որուն Ս. Միխայիլ անունը կը տրուէր, Ս. Ստեփանոսը՝ Սիոնի արեւելքը գտնուող Ս. Սիւրենի եկեղեցոյն և մերձակայ Ս. Պետրոսի վանքին մէջ յիշուած Երիցավանքը, Դաւթի դրան մօտ, որու մասին վրացերէն սաղիմական ծիսարանը (Տե՛ս Գերմ. Թրգմ. Goussenի) հետեալ ծանօթութիւնը կուտայ «Հօկտ. 5 ին, Ժուրսկի ֆահանայի վանքին, Լաշերնայի մէջ (փոխ. Պլաշերնայի), Ս. Միխայիլի մօտ, նաւախիֆ Ս. Ասուածածնի եկեղեցոյն»: Այս խօսքերը յայտնի կ'ընեն թէ՛ Երիցվանքն ալ, յանուն Ս. Աստուածածնի, մօտ էր Հայոց Ս. Հրէշտակապետին, ինչպէս նաև Դաւթի դրան, ուր կար Ռշտունեաց վանքը իր ուրկանոցով, և ուրկէ Ս. Յակոբայ մայրավանքն ալ շատ հեռու չէր: Վանքերու այս խմբաւորումէն դատելով կարելի է եզրակացնել թէ ցուցակագիր վրդ.ին՝ ուրկանոցին նկատմամբ, «նայ վանօրհից» բացատրական խօսքը ճշգրտօրէն կ'արդարանայ, թէև սխալ մը չ'ըլլար, եթէ Ռշտունեաց վանքին ուրկանոցը նկատենք Ս. Քաղաքին բոլոր հայ վանօրհից մէկ հաստատութիւնը:

Ուրկանոցի վանքին տեղը ճշգելու համար, ունինք նաև Վերգպուրկի եպիսկոպոս՝ Թէոտորիքի 1172ի Ուղեգրութիւնը, ինչպէս վերև ալ ակնարկեցինք. յիշեալը հետեւեալ տողերով գրած է նոյն վանքի մասին. «... Դաւթի աշարակին սխեղով՝ հասայ ֆաղափն արեւմեան անկիւնը՝ ուր կային եկեղեցի մը և ուրուկներու թանաքաններ, շատ մաքուր և վայելուչ վիճակի մէջ» (Տե՛ս «Theodorich, Description of the Holy Places», էջ 43): Ուրեմն,